ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ

2013/ՀՈՒՆՎԱՐ-ՍԵՊՏԵՄԲԵՐ

1. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ

Ճգնաժամից հետո 2013թ. առաջին անգամ 2-րդ եռամսյակի ՀՆԱ իրական աճը զիջում է առաջին եռամսյակի ցուցանիշին

2013թ. առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժ/շ համեմատ ՀՆԱ արտադրության կառուցվածքում՝

- ✓ նվազել են շինարարության, գյուղատնտեսության և արդյունաբերության տեսակարար կշիռները համապատասխանաբար 2.5, 1.2 և 0.7 տոկոսային կետով,
- ✓ ավելացել են զուտ հարկերի, ծառայությունների և առևտրի տեսակարար կշիռները համապատասխանաբար 2.3, 1.5 և 0.6 տոկոսային կետով

ՀՆԱ սպառման կառուցվածքում շարունակում են ավելանալ վերջնական սպառման ծախսերի և նվազել համախառն կուտակման տեսակարար կշիռները

Համախառն կուտակում/ՀՆԱ ցուցանիշը 2013թ. առաջին և երկրորդ եռամսյակներին շարունակել է նվազել՝ համապատասխանաբար մոտ 1.7 և 1.5 անգամ զիջելով նախորդ 6 տարվա նույն ժամանակահատվածների միջինին

ՀՆԱ ԻՐԱԿԱՆ ԱՃ, %



ՀՆԱ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



ՀՆԱ ՍՊԱՌՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



ՀԱՄԱԽԱՌՆ ԿՈՒՏԱԿՈՒՄ/ՀՆԱ, %



2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2013թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 3.2%

Տնտեսության բոլոր ճյուղերում աճ է արձանագրվել՝ բացառությամբ շինարարության՝ -9.2%

Առավելագույն հավելաճ գրանցվել է արդյունաբերությունում՝ 7.0%

Գլոբալ մրցունակության 2013-2014թթ. ինդեքսում Հայաստանը զբաղեցրել է 79-րդ տեղը 148 երկրների շարքում՝ նախորդ տարվա համեմատ բարելավելով դիրքը 3 տեղով

Հայաստանը 2-րդ՝ «Արդյունավետության վրա հիմնված» փուլից նահանջել է 1-ից 2-ին «Անցումային փուլ»

Գնահատված ԱՊՀ երկրների շարքում ԳՄԻ միավորով Հայաստանը 4-րդն է, իսկ հարևան երկրներից առաջ է միայն Իրանից

«Գործարարությամբ զբաղվելը» 2014թ. ինդեքսում Հայաստանը զբաղեցնում է 37-րդ տեղը 189 երկրների շարքում՝ նախորդ տարվա համեմատ բարելավելով դիրքը 3 տեղով

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ, %



ԹՈՂԱՐԿՄԱՆ ԾԱՎԱԼԻ ԱՃ, % ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆՈՒՅՆ Ժ/Շ ՆԿԱՏՄԱՄԲ

	2007-9	2008-9	2009-9	2010-9	2011-9	2012-9	2013-9
Արդյունաբերական արտադրանք	2.1	3.4	-11.4	10.9	13.0	11.6	7.0
Գյուղատնտեսական արտադրանք	8.3	4.2	-1.3	-17.9	15.3	10.5	5.5
Շինարարություն	18.3	12.1	-43.8	-5.2	-20.0	-2.0	-9.2
Առևտրի շրջանառություն	8.6	10.1	-5.4	4.5	3.3	2.9	2.1
Ծառայություններ	17.0	14.5	-1.2	7.4	5.8	11.2	2.8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ ԳԼՈԲԱԼ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ 2013-2014 ԻՆԴԵՔՍՈՒՄ

	Դիրք	Փոփոխություն	Միավոր	Փոփոխություն
Գլոբալ մրցունակության ինդեքս	79	▲ 3	4.1	▲ 0.1
Հիմնական պահանջներ	73	▲ 3	4.5	▲ 0.1
Արդյունավետության խթաններ	85	▼ -3	3.9	— 0.0
Նորարարության և կատարելագործվածության գործոններ	88	▲ 10	3.4	▲ 0.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼԸ 2014Թ. ԻՆԴԵՔՍՈՒՄ

	2013	2014	Փոփոխությունը
Գործարարությամբ զբաղվելը	40	37	▲ 3
Ընկերության հիմնադրում	10	6	▲ 4
Շինարարական թույլտվություններ	71	79	▼ -8
Էլեկտրաէներգիայի արտադրություն	107	109	▼ -2
Սեփականության գրանցում	4	5	▼ -1
Վարկերի ստացում	40	45	▼ -5
Ներդրողների պաշտպանվածություն	21	22	▼ -1
Հարկերի վճարում	112	103	▲ 9
Արտաքին առևտուր	116	117	▼ -1
Պայմանագրերի կիրարկում	117	112	▲ 5
Ընկերության լուծարում	76	76	— 0

3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերության բոլոր բաժիններում աճ է արձանագրվել, բացի «Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» բաժնից (-2.2%), որի ծավալները շարունակում են նվազել մարտ ամսից սկսած

Բնեղեն արտահայտությամբ էլեկրտաէներգիայի արտադրությունը նվազել է 245.2 մլն կվտ/ժամով կամ 4.1%-ով

Մատակարարված էլեկտրաէներգիայի ծավալը աճել է 1.2%-ով, այդ թվում՝ բնակչությանը՝ նվազել է 0.4%-ով, իսկ արդյունաբերությանը՝ աճել է 3.9%-ով

Էլեկրտաէներգիայի արտահանման ծավալը նվազել է 31.1%-ով

Արդյունաբերության թողարկման աճին առավելապես նպաստել են՝

- ✓ մետաղական հանքաքարի արդյունահանումը (աճը՝ 10.1%)
- ✓ ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը (60.7%)
- ✓ խմիչքների արտադրությունը (17.1%)
- ✓ հիմնային մետաղների արտադրությունը (8.8%)
- ✓ սննդամթերքի արտադրությունը (2.6%)

Նշված ոլորտները (բացառությամբ սննդամթերքի արտադրության) արտահանման ընդգծված ուղղվածություն ունեն

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ

	Արտադրանքի ծավալ մլրդ. դրամ	Աճ 2012թ. նույն ժ/շ նկատմամբ,	Կառուցվածք, %	Նպաստման չափ, տոկոսային կետ
Արդյունաբերություն	874.6	7.0	100.0	-
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	149.0	10.1	17.0	1.8
Մշակող արդյունաբերություն	555.4	8.8	63.5	5.4
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	157.0	-2.2	17.9	-0.4
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառ. և վերամշակում	13.3	7.6	1.5	0.1

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՌՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՏԳ ԵՐԿՆԻՇ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

	Արտադրանքի ծավալ, մլրդ դրամ	Արտադրանքի իրացում, մլրդ դրամ	Արտահանում, մլրդ դրամ	Արտահանում իրացման նկատմամբ, %
Արդյունաբերություն	874.6	854.6	333.2	39.0
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	149.0	131.2	87.5	66.7
Մետաղական հանքաքարի արդյունահանում	145.0	126.7	86.1	68.0
Հանքագործական արդյունաբ. և բացահանքերի շահ. այլ ճյուղեր	4.0	4.5	1.4	31.3
Մշակող արդյունաբերություն	555.4	553.2	231.4	41.8
Սննդամթերքի արտադրություն	199.7	193.2	10.8	5.6
Խմիչքների արտադրություն	84.0	82.7	53.0	64.1
Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	26.6	28.9	20.8	72.2
Հագուստի արտադրություն	4.1	4.1	1.7	41.4
Թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն	7.8	8.0	0.1	0.7
Պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում	9.0	9.2	0.1	1.2
Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադր.	5.6	6.3	1.2	18.3
Դեղագործական արտադրանքի արտ.	3.8	3.7	2.0	54.8
Ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	14.8	15.2	1.8	11.8
Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների	38.2	36.9	9.7	26.2
Հիմնային մետաղների արտադր.	120.9	124.1	110.4	89.0
Պատրաստի մետաղական արտադրատեսակների արտադր.	10.0	9.7	1.1	11.4
Համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարք. արտադր.	3.5	3.9	2.2	57.1
Էլեկտրական սարքավորանքի արտադրություն	3.6	3.7	1.7	45.9
Մշակող արդյունաբ. այլ ճյուղեր	23.7	23.6	14.8	62.8
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	156.9	156.9	14.3	9.1
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառ. և վերամշակում	13.3	13.3	-	-

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, շարունակություն

Մշակող արդյունաբերությունում զգալի և անընդհատ աճ են ցուցաբերել դեռևս փոքր տեսակարար կշիռ ունեցող ծխախոտային արտադրատեսակների, դեղագործական արտադրանքի, թուղթ և թղթե արտադրատեսակների, պատրաստի մետաղական արտադրատեսակների արտադրությունները

2013թ. սկզբից շարունակ անկում է գրանցվել ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն, համակարգիչների և էլեկտրոնային սարքավորումների արտադրություն և էլեկտրական սարքավորանքի արտադրություն գործունեության տեսակներում

2013թ. I կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ արդյունաբերությունում կատարված օտարերկրյա ներդրումները նվազել են 20.3, իսկ օտարերկրյա ուղղակի ներդրումները՝ 39.8 տոկոսով

Արդյունաբերությունում կատարված օտարերկրյա ներդրումների 71.9 և օտարերկրյա ուղղակի ներդրումների 55.0 տոկոսն ուղղվել են հանքագործական արդյունաբերությանը

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ



ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԻ, ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՃԵՐՆ ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ, %



ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ

	Արտադրանքի ծավալ մլրդ. դրամ	Աճ 2012թ. նույն ժ/շ նկատմամբ, %	Կառուցվածք, %	Նպաստման չափ, տոկոսային կետ
Սննդամթերքի արտադրություն	199.7	2.6	35.9	0.9
Հիմնային մետաղների արտադրություն	120.9	8.8	21.8	2.2
Խմիչքների արտադրություն	84.0	17.1	15.1	2.4
Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	38.3	3.8	6.9	0.3
Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	26.6	60.7	4.8	1.7
Ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	14.8	-4.8	2.7	-0.1
Ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	13.6	28.5	2.5	0.5
Պատրաստի մետաղե արտադր. արտադրություն	10.0	27.5	1.8	0.4
Այլ	47.6	-	8.6	0.5

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական և ապահովագրական գործունեությունն առաջատարն է ծառայությունների կառուցվածքում

Ծառայությունների բոլոր բաժիններում աճ է արձանագրվել, բացառությամբ տրանսպորտի՝ -16.1% (օդային տրանսպորտի հաշվին) ու վարչական և օժանդակ գործունեության՝ -13.0% (նվազել են բոլոր հիմնական հատվածները)

Զբոսաշրջիկների թվի աճ է արձանագրվել և ժամանողների, և մեկնողների գծով՝ համապատասխանաբար 12.4 և 11.6 %-ով

Մեկնողների թվաքանակը գերազանցել է ժամանողներինը ընդամենը 880 մարդով՝ նախորդ տարվա նույն ժ/շ 5100 մարդու դիմաց

2013թ. ինն ամսվա ընթացքում ՏՀՏ ոլորտի աճը կազմել է 12.3%

ՏՀՏ ամենամեծ մասնաբաժինը կազմող ծառայությունները (87%) աճել են 9.8%-ով

Ամենաարագ աճը ցուցաբերել է ՏՀՏ առևտուրը՝ 38.8% (տեսակակար կշիռը՝ 12.2%)

Ոլորտի արտադրության շարունակվող անկումը (-0.1%) հանգեցրել է ՏՀՏ-ում նրա տեսակարար նվազմանը 1.4%-ից (2009թ.) մինչև 0.8%

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

	2007-9	2008-9	2009-9	2010-9	2011-9	2012-9	2013-9
Զբոսաշրջիկների թվաքանակ, հազար մարդ							
Ժամանողներ	370.7	399.7	422.1	487.9	551.6	603.1	677.9
Մեկնողներ	364.6	391.7	398.1	474.6	546.2	608.2	678.8
Զբոսաշրջիկների թվաքանակի աճ, %							
Ժամանողներ	33.8	7.8	5.6	15.6	13.1	9.4	12.4
Մեկնողներ	38.8	7.4	1.6	19.2	15.1	11.4	11.6

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

	2009-9	2010-9	2011-9	2012-9	2013-9
ՏՀՏ ոլորտի ծավալ, մլրդ դրամ					
ՏՀՏ, այդ թվում	141.6	141.5	141.0	155.5	171.1
արտադրություն	2.0	1.2	1.3	1.4	1.4
առևտուր	6.4	6.4	12.9	14.2	20.8
ծառայություններ, որից՝	133.2	133.8	126.8	139.9	148.8
հեռահաղորդակցություն	119.6	119.5	118.1	122.9	127.7
ՏՀՏ ոլորտի աճ, %					
ՏՀՏ, այդ թվում	3.5	4.0	0.3	4.6	12.3
արտադրություն	-41.9	26.3	7.1	-12.2	-0.1
առևտուր	-11.4	81.4	25.6	8.7	38.8
ծառայություններ, որից՝	5.4	1.9	-1.6	4.4	9.8
հեռահաղորդակցություն	6.5	1.0	-1.5	2.6	8.7

5. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

2013թ. հունվար-սեպտեմբերին շարունակվել է ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ աճի միտումը

Ինչպես և նախորդ տարիներին՝ արտահանման ապրանքային կառուցվածքը համակենտրոնացման ավելի բարձր աստիճան է դրսևորել, քան ներմուծմանը. առաջին 4 խոշոր ապրանքախմբերի արտահանման և ներմուծման տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 82.4 և 49.8%

Արտահանման մոտ 54.6% բաժին է ընկնում հիմնական առևտրային գործընկերներին՝ Ռուսաստան, Բելգիա, Բուլղարիա, Իրան, ԱՄՆ

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԴԻՆԱՄԻԿԱ

	2007-9	2008-9	2009-9	2010-9	2011-9	2012-9	2013-9
Արտաքին առևտրի ծավալ, մլն ԱՄՆ դոլար							
Արտահանում	828.9	822.0	490.0	726.2	973.3	1032.0	1088.6
Ներմուծում	2186.5	3122.3	2247.2	2659.8	2974.6	3009.6	3081.0
Առևտրաշրջանառություն	3015.4	3944.3	2737.3	3386.0	3947.9	4041.6	4169.6
Առևտրի հաշվեկշիռ	-1357.6	-2300.3	-1757.2	-1933.6	-2001.3	-1977.6	-1992.4
Արտաքին առևտրի աճ, %							
Արտահանում	22.8	-0.8	-40.4	48.2	34.0	6.0	10.6
Ներմուծում	45.7	42.8	-28.0	18.4	11.8	1.2	2.5
Առևտրաշրջանառություն	38.6	30.8	-30.6	23.7	16.6	2.4	4.5

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ



ՆԵՐՄՈՒԾՈՒՄ



6. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

2013թ. առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ օտարերկրյա և օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները նվազել են համապատասխանաբար 34.7 և 64.2%-ով

ՀՆԱ նկատմամբ օտարերկրյա և օտարերկրյա ուղղակի ներդրումների մասնաբաժինները հաշվետու ժամանակահատվածում ցածր են ճգնաժամային տարում (2009թ.) արձանագրված ցուցանիշից համապատասխանաբար 2.0 և 4.4 տոկոսային կետով

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱ

	2007-S1	2008-S1	2009-S1	2010-S1	2011-S1	2012-S1	2013-S1
Օտարերկրյա ներդրումների ծավալ, մլն դոլար							
Օտարերկրյա ներդրումներ	312.2	515.1	312.2	327.5	438.8	449.1	293.1
այդ թվում՝ ուղղակի	214.0	352.7	246.4	220.3	366.4	330.5	118.2
Օտարերկրյա ներդրումների աճ, %							
Օտարերկրյա ներդրումներ	74.9	65.0	-39.4	4.9	34.0	2.4	-34.7
այդ թվում՝ ուղղակի	148.1	64.8	-30.1	-10.6	66.3	-9.8	-64.2

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ/ՀՆԱ, %



ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ, %



ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ, %



7. ԳՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2013թ. հունվար-սեպտեմբերին սպառողական գների ինդեքսը կազմել է 5.6%

2013թ. համար թիրախավորված է սպառողական գների ինդեքսի 4±1.5% ցուցանիշը

Ի տարբերություն նախորդ տարվա՝ 2013թ. հունվար-սեպտեմբերին գների ամենաբարձր աճն արձանագրվել է ոչ թե «ոչ պարենային ապրանքների», այլ «պարենային ապրանքների» գծով

Ինչպես և նախորդ տարի, 2013թ. հունվար-սեպտեմբերին նվազել է գյուղմթերք արտադրողների իրացման գների ինդեքսը

Միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 146.4 հազար դրամ, նախորդ տարվա նույն ժ/շ 141.9 հազար դրամի դիմաց

2013թ. երրորդ եռամսյակում նվազագույն աշխատավարձը գերազանցում է նվազագույն պարենային զամբյուղը 1.4 անգամ, սակայն 1.3 անգամ փոքր է նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ, ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆՈՒՅՆ Ժ/Շ ՆԿԱՏՄԱՄԲ, %

	2007-9	2008-9	2009-9	2010-9	2011-9	2012-9	2013-9
Սպառողական գների ինդեքս	103.8	109.7	102.9	107.8	108.5	102.3	105.6
Պարենային ապրանքներ	104.8	111.5	99.1	107.0	112.8	101.9	106.0
Ոչ պարենային ապրանքներ	99.0	105.7	102.6	111.1	103.1	104.2	104.9
Ծառայություններ	104.5	108.4	110.2	107.5	104.0	102.1	105.1

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐՆ ԸՍՏ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ, ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆՈՒՅՆ Ժ/Շ ՆԿԱՏՄԱՄԲ, %

	2007-9	2008-9	2009-9	2010-9	2011-9	2012-9	2013-9
Արդյունաբերողների արտ. ԳԻ	100.3	106.0	100.8	125.9	110.9	105.7	104.8
Գյուղմթերք արտ. իրացման ԳԻ	103.8	96.0	87.5	126.0	119.9	96.8	97.7
Արտահանման միջին ԳԻ	95.9	102.5	83.5	123.9	113	98.1	101.6
Ներմուծման միջին ԳԻ	100.1	108.4	115.9	102.0	109.2	108.4	104.1

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ, ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԵՎ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԶԱՄԲՅՈՒՂՆԵՐ, ԸՆԹԱՑԻԿ ԳՆԵՐՈՎ, ՀԱԶԱՐ ՀՀ ԴՐԱՄ